

VOL. 45 / No. 20-21 (2310-2311), 12+4+4+4 էջ / \$1.75

9-16 ՀՈԿՏԵՄԲԵՐ / 9-16 OCTOBRE / OCTOBER 9-16, 2023

Ատրպէյճանական լայնածաւալ յարձակումէն ետք՝ Արցախի բանակը կազմալուծուած

100 հազարէ աւելի հայեր բռնագաղթի ենթարկուեցան

Յունուար 1, 2024-ին Արցախի Հանրապետութիւնը կը դադրի գոյութիւն ունենալ



Կարդալ էջ 4

ՀՅԴ ԳԵՄ-ի կազմակերպութեամբ Օթթաուայի մէջ կայացաւ Արցախի զօրակցութեան քայլերթ



Կարդալ էջ 3

Արցախի զօրակցութեան քայլերթ Թորոնթօյի մէջ



Կարդալ էջ 3

«Օգնենք Արցախի ընտանիքներուն»



Կարդալ էջ 6

Մոնթրէալի մէջ տեղի ունեցաւ Արցախի զօրակցական հաւաք



Կարդալ էջ 8

Վանգօւլըրի մէջ Արցախի զօրակցութեան բողոքի հաւաք կայացաւ



Կարդալ էջ 3

HONDA
GABRIEL

HYBRID

THE ALL-NEW 2023 HONDA CR-V TOURING HYBRID

KEVORK ASADOURIAN
TRO BACHEKJIAN

7000, boul. Henri-Bourassa Est
Montréal-Nord, (Québec) H1G 6C4
☎ : 514 327-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Սեփականատեր
Յարութ Միփան

Ընտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնեք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

IN HOUSE

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



Արցախի զորակցութեան քայլերի Թորոնթոյի մէջ

Արցախի զորակցութեան բողոքի ցոյցով թորոնթոնականները վերահաստատեց պայքարը շարունակելու իր վճռակամութիւնը:

Կիրակի, 24 Սեպտեմբեր 2023-ին, յետմիջօրէին Տանտասի կեդրոնական հրապարակը ողորդեցաւ թորոնթոնականները: Ներկայ էին մանուկն ու պատանին, երիտասարդն ու տարեցը: Հայրենիքի կանչն էր կրկին, եւ այս անգամ Արցախի գոյութեան սպառնացող վտանգը:

Քայլերի մեկնարկի առաջին ելոյթը ունեցաւ ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութեան ներկայացուցիչ Սարգիս Գլադոսեանը: Ան իր խօսքին մէջ ըսաւ, որ աշխարհի ղեկավարները տուեալ պահուն տեղեակ են, թէ արցախահայտնութիւնը բռնազաւթման կ'ենթարկուի, եւ Ատրպէյճանի ցեղասպանութիւն կ'իրագործէ: Ան հաստատեց, որ կացութիւնը Արցախի մէջ լուրջ մարդասիրական հարց կամ ճգնաժամ չէ, այլ աւելին՝ համաշխարհային տարողութեամբ խնդիր:

Աւարտին իր խօսքը ուղղելով Գանատայի լրատուական գործակալութիւններուն՝ ըսաւ. «Այսօր այստեղ հաւաքուած ենք արդարութիւն պահանջելու: Այսօր այս հրապարակէն կը պահանջենք գանատական լրատուական գործակալութիւններէն, որ դադարեցնեն իրենց կոչած «հաւասարակշռուած տեսանիւթ» քաղաքականութիւնը. իրականութեան մէջ չկայ հաւասարակշռուած նիւթ, այլ կան բռնութիւն գործադրողներ, կան անարդարութիւններ, որոնք պէտք է լուսարձակի տակ առնուին»:

Յորդեգանք թորոնթոնականները միահամուռ շարքերով ուղղեցաւ դէպի Միացեալ Նահանգներու դեսպանատուն: Երիտասարդներն ու պատանիները պատասխանեցին ու դրօշներով առաջնորդեցին քայլերը: Ուշագրաւ էր նաեւ այն իրողութիւնը, որ խօսուելու պատասխաններն ու բարձրաձայն հնչած կարգախօսներն ու լողունգները ուշադրութեան կեդրոն դարձան նաեւ բազմաթիւ օտար անցորդներու, որոնց զգալի մասը հետաքրքրութեամբ հետեւեցաւ ցոյցին:

Միացեալ Նահանգներու դեսպանատան շէնքին դիմաց խօսք առաւ Գառնի Թաթիկեանը: Ան լուսարձակի տակ առնելէ ետք Հայաստանի եւ Արցախի մէջ տիրող կացութիւնը, մատնանշեց այն կարեւոր դերը, որ Միացեալ Նահանգները կրնար խաղալ ի խնդիր արդարութեան հաստատման:

Թորոնթոնականները բողոքի քայլերի վերջին հանգրուանը «Նախնային Յիշիկ» կեդրոնական հրապարակին էր, ուր երիտասարդականի անունով խօսք առաւ Ժան Զաթալեանը: Ան ըսաւ, որ միջազգային հանրութիւնը պէտք է իմանայ, որ Ատրպէյճանը երկրորդ ցեղասպանութիւն մը գործադրելու սեմին կը գտնուի, ապա համապատասխան քայլեր պէտք է ձեռնարկէ կանխարգելիչ ու օրէնքային միջոցներով արցախահայտնութեան նկատմամբ: Ան ըսաւ. «Թոյլ պիտի չտանք, որ պատմութիւնը ինքզինք կրկնէ: Թոյլ պիտի չտանք, որ արցախայահատնութիւնը տանջանքի մատնուի: Պէտք է ամէն ճիշդի գործ դնել, ապահովելու արցախայահատնութեան գոյութիւնն ու արագ քայլերով արդարութիւնը հաստատուելու»: Ան աւարտեց խօսքը ըսելով. «Միասնաբար պիտի փրկենք Արցախն ու արցախցին»:

Ապա խօսք առաւ ՀՅԴ Սողոմոն Թեւիշիւրեան կոմիտէի ներկայացուցիչ Վահան Աճէմեանը: Ան նախ ընդգծեց հայ ժողովուրդի կրած պատմական վայրագութիւնները, մասնաւորապէս 1915-ի Հայոց ցեղասպանութիւնը թուրքիոյ կողմէ իրագործուած, ապա դիտել տուաւ, թէ ինչպէս դար մը ետք նոյն ցեղասպանութիւնը կը շարունակուի եւ ըսաւ. «Բայց այս անգամ հաստատօրէն պիտի չսպասենք 100 տարի, մենք այսօր հարցը լուծուած տեսնել կ'ուզենք»:

Աճէմեան ներկաներուն ուշադրութեան յանձնեց այն փաստացի իրականութիւնը, թէ միջազգային ճգնաժամներուն Գանատան ճանչցուած է օգնութեան ձեռք երկարող, ինչպէս, վերջին օրինակով, անոր օժանդակութիւնը Ուրաղանիոյ, ապա հարցադրեց, թէ ինչո՞ւ յար ու նման քայլեր չձեռնարկուեցան հայ ժողովուրդին նակատմամբ, այսօր նաեւ չեն ձեռնարկուել արցախահայտնութեան ի նպաստ: Ան հարցականի տակ դրաւ, թէ ինչո՞ւ հայկական իրողութիւնը շատ աւելի քիչ գնահատուած է, քան այլոց: Ան կոչ ուղղեց, որ շուտով Գանատան շօշափելի աջակցութիւն ցուցաբերէ արցախահայտնութեան, ապա աւելցուց, որ պէտք է միջազգային գետնի վրայ քայլեր ձեռնարկել, Արցախի իրավիճակը կայուն դարձնելու, եւ արցախահայտնութեան գոյութիւնը ապահովելու:

Աճէմեան իր խօսքի աւարտին շեշտեց կարեւորութիւնը ժողովրդավարական արժէքներու պաշտպանութեան եւ ցեղասպանութեան դէմ ոտքի կանգնելու կարեւորութեան, ապա կոչ ուղղեց Գանատայի ղեկավարութեան՝ անյապաղ քայլեր ձեռնարկելու Արցախի ճգնաժամը լուծելու համար: Վերջապէս իր խօսքը ուղղելով թորոնթոնականներուն՝ ըսաւ. «Միքիլ՝ հայ ժողովուրդ, բնաւ մի՛ յուսահատիր: Մեր հայրենիքը մեզի պէտք ունի: Ձեր զաւակները հայ մեծցուցէք. պայքարը կը շարունակուի»:

Ելոյթ ունեցաւ նաեւ Խաթալ Գուլաճեանը: Ան նշեց, որ հայտնութիւնը միայն միասնակամութեամբ է, որ պիտի փրկէ հայրենիքը իր ներքին եւ արտաքին թշնամիներէն: «Չկայ գանատահայ, չկայ արեւելահայ, արեւմտահայ կամ սփիւռքահայ, կայ հայութիւն մէկ տեսակ, կայ հայ, ըսաւ ան, ապա մէջբերելով Չարենցի խօսքը, «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է»: Գուլաճեան դիտել տուաւ, որ ըսուածը բացարձակ ճշմարտութիւն է եւ ըսաւ. «Բողոքի այս ցոյցով մեր պարատականութիւնը չէ աւարտած: Մենք աշխատանք ունինք կատարելիք: Իւրաքանչիւրս իր կարելին պէտք է ընէ, որ անյապաղ մեր խօսքն ու պահանջները հասնին ու դրուին քաղաքական պաշտօնատարներու սեղաններուն վրայ, որպէսզի մարդասիրական խորհրդանիշ նկատուած այս երկիրը, հայտնութեան եւ յատկապէս Արցախին այ իր օգնութեան ձեռքը երկարէ», ապա իր խօսքը փակեց ըսելով. «Միասնաբար կը յաղթահարենք, հաւատացէ՛ք»:

Տէր Տաթեւ Աւագ Քահանայ Միքայէլեան կոչ ուղղեց չընկրկելու եւ շարունակելու պայքարը, ապա աղօթքով աւարտեց իր պատգամը:

Հայաստանի եւ Արցախի քայլերգներու երգեցողութեամբ իր աւարտին հասաւ թորոնթոնականներու քայլերը:

Միւլի Աբելեան

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՏԵՂԱՀԱՆՈՒԱԾ ԱՐՑԱԽԱՀԱՅՈՒԹԵԱՆ



Հովանաւորութեամբ եւ օրհնութեամբ Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Բարդէյ Արքեպիսկոպոս Չարեանի, Թեմիս Կրօնական Ժողովն ու Ազգային Վարչութիւնը մարդասիրական օժանդակութիւն տրամադրեցին Արցախէն Հայաստանի Սիւնիքի սահմանը հատող հայրդիններուն, որոնք մագապուրծ ճողոպրած էին ազերիական ցեղասպանական հալածանքներէն:

Գանատայի Հայոց Թեմը ներկայացնող պատուիրակութիւնը Երեւանի մէջ համախմբեց կամաւորական խումբ մը եւ սկսաւ կազմակերպչական իր աշխատանքները: Պատրաստուեցան մարդասիրական օժանդակութեան յատուկ ծրարներ եւ կենցաղային պէտքեր, բաժնելու համար տեղահանուած եւ նիւթական, բարոյական ու մարդկային տոյժեր կրած Արցախահայտնութեան:

Երկուշաբթի, 2 Հոկտեմբեր 2023-ին, պատուիրակութիւնը մեկնեցաւ Գորիս եւ իւրաքանչիւր ընտանիքի տրամադրեց օժանդակութիւն: Այս նպատակով, Հայաստանի մէջ գործող «Արքեան Հաստատութիւն»-ը Ազգային Առաջնորդարանի միջոցով՝ սոյն ծրագրին մասնակցեցաւ նիւթական օժանդակութեամբ:

Ստեղծուած կացութիւնը անասելի է՝ եւ կարիքները անսահման: Կոչ կ'ուղղենք Գանատայ մեր գաղութի հաւատացեալ զաւակներուն անտարբեր չմնալ եւ գիտակցիլ վերջին հարկւրամեակի երկրորդ ցեղասպանութեան եւ տեղահանման ու հայրենազրկութեան ստեղծած լուրջ սպառնալիքին:

Աւելի առաջ եւ ասկէ աւելին չկրցանք ընել, իսկ հիմա ի՛նչ որ պարտինք ընել՝ ընենք:

ԴԻԻԱՆ Ագային Առաջնորդարանի

ՀՅԴ ԳԵՄ-ի կազմակերպութեամբ Օթթաուայի մէջ կայացաւ Արցախի զորակցութեան քայլերը

ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութեան (ԳԵՄ) կազմակերպութեամբ, Սեպտեմբեր 23-ին Օթթաուայի մէջ կայացաւ Արցախի զորակցութեան քայլերը եւ կարգախօսներով ու ցուցադրատեսերիւրով բողոք արտայայտեցին Արցախի եւ արցախահայտնութեան նկատմամբ Ատրպէյճանի վարած ցեղասպանական քաղաքականութեան դէմ: Երթը պարբերաբար կանգ առաւ Ռուսաստանի, Ատրպէյճանի, Միացեալ Նահանգներու եւ Հայաստանի դեսպանատուներուն դիմաց, ինչպէս նաեւ Օթթաուայի քաղաքակեդրոնի բանուկ պողոտաներուն վրայ:

ՀՅԴ ԳԵՄ-ի երիտասարդները վերահաստատեցին իրենց յանձնառութիւնը ամէն ձեւով զորակցելու Արցախի ժողովուրդին եւ դէմ դնելու Ատրպէյճանի ոճրային քաղաքականութեան:

Վանգուվրի մէջ տեղի ունեցաւ Ինքնաշարժներով ցոյց եւ հաւաք՝ առ ի զորակցութիւն Արցախի

1 Հոկտեմբեր 2023-ին, ինչպէս աշխարհի չորս կողմը, ներառեալ Գանատայի գանազան քաղաքներու մէջ, Վանգուվրի մէջ եւս, կազմակերպութեամբ տեղւոյն միացեալ յանձնախումբին, տեղի ունեցաւ Արցախի ժողովուրդին զորակցական ինքնաշարժներով արշաւ-ցոյց եւ հաւաք:

Վանգուվրի Հայ կեդրոնի շրջափակէն աւելի քան 30 ինքնաշարժներով, Գանատայի եւ Արցախի հանրապետութեան դրօշակները պարզած, ցուցատախտակներով եւ լողունգներով լի պատասխաններով, Վանգուվրի փողոցներէն անցան ցուցադրանքներ եւ հասան քաղաքի կեդրոն, Ռոպպըն փողոցի խաչմերուկին վրայ հասարակութեան ուշադրութիւնը գրաւելով:

Հաւաքին ներկայ էր ՀՅԴ Գանատայի Կեդրոնական կոմիտէի անդամ ընկերուհի Թիթար Քօչքերեան եւ Բրտական տեղական կազմակերպութեան ներկայացուցիչը: Հերթաբար խօսք առին ՀՅԴ Գանատայի Երիտասարդական միութեան «Ա. Շիրակեան» մասնաճիւղի անդամ ընկերուհի Գառնի Քօչքերեան, Գանատայի Պրիթի Գոլոմպիա նահանգի Առողջապահութեան նախարար տիար Ատրիան Տիքս եւ Գանատայի Հայ Դատի Արեւմտեան շրջանի անդամ Վահէ Անտոնեան: Անոնք շեշտեցին, որ Գանատայ աւելին պէտք է ընէ, աւելի խստօրէն պէտք է դատապարտէ ազերի-թուրքերու արցախահայտնութեան դէմ անվաւեր ձերբակալութիւնները, Վայրազութիւններն ու բռնի տեղահանութիւնը: Գանատայ պէտք է սատարէ Հայաստանին, որպէսզի բռնի տեղահանուած արցախահայտնային վերադառնան իրենց պայանական տունները:

Վահէ Անտոնեան շեշտեց, որ ժամը հասած է, որպէս գիտակից, մտահոգ պատասխանատու հայեր, մեր ընդվզուած փոխանցենք մեր հայրենաբնակ ազգայիններուն. ժամը հասած է ոտքի կանգնելու եւ ձերբազատուելու երկրի ղեկը առած, ազգը դէպի արհաւիրք առաջնորդած, թոյլ, անկարող եւ ապագային ղեկավարէն եւ իրեն կառչողներէն:

Նշենք, որ ցոյցի սկիզբէն մինչեւ վերջ, գանատական կարեւորագոյն լրատուամիջոցներէն CBC Canada-ն ներկայ էր, կը նկարահանէր եւ զանազան հարցազրոյցներ ունեցաւ գաղութի ներկայացուցիչներուն եւ անդամներուն հետ:

Ատրպեյճանական լայնածառայ յարձակումէն ետք՝ Արցախի Պաշտպանութեան բանակը Կազմալուծուած

Աւելի քան 100 հազար արցախահայեր բռնազաղթի ենթարկուեցան

Յունուարի 1, 2024-ին Արցախի Հանրապետութիւնը կը դադարի գոյութիւն ունենալ

Ազրպեյճանի պաշտպանութեան նախարարութիւնը Սեպտեմբեր 19-ին յայտարարեց, որ Ղարաբաղի մէջ «հակահարձակական գործողութիւններ»-ու կը սկսի՝ նպատակ ունենալով ի միջի այլոց նաեւ «վերականգնել Ազրպեյճանի Հանրապետութեան սահմանադրական կարգը»: Նոյն օրը, Ազրպեյճանի զանգուածային զինուորական յարձակում սկսաւ Արցախի դէմ:

Հայաստանի արտաքին գործոց նախարարութիւնը յայտարարեց, որ Ազրպեյճանը սանձազերծած է հերթական լայնածառայ նախադրական Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին նկատմամբ՝ նպատակ ունենալով աւարտին հասցնել ցեղային գտումներու իր քաղաքականութիւնը:

Արցախի Իշխանութիւնները Համաձայնեցան Լուծարել Պաշտպանութեան Բանակը Եւ Քննարկել Ազրպեյճանի Հետ Համարկումի Հարցը

Սեպտեմբեր 20-ին, միօրեայ կատարման մարտերէ ետք, Արցախի Հանրապետութեան իշխանութիւնները յայտարարեցին, որ Համաձայնած են լուծարել Արցախի պաշտպանութեան բանակը եւ քննարկել Ազրպեյճանի հետ Համարկումի հարցը:

Այս որոշումը տալէ առաջ Արցախի նախագահը հրաւիրած էր Անվտանգութեան խորհուրդի նիստի, որուն մասնակցած են քաղաքական բոլոր ուժերն ու նախկին նախագահներ Արկաղի Ղուկասեանը, Բակօ Սահակեանը եւ Արայիկ Յարութիւնեանը:

Արցախի Հանրապետութեան նախագահ Սամուէլ Շահամանեանը որոշումը հրապարակելէ առաջ ըսած էր, թէ Արցախը հարկադրուած պիտի ըլլայ դիմելու համապատասխան քայլերու՝ գերնպատակ ունենալով առաջնահերթօրէն ապահովել բնակչութեան ֆիզիքական անվտանգութիւնը: Ընդունելով կրակի դադարեցման վերաբերեալ ուսուական խաղաղապահ առաքելութեան հրամանատարութեան առաջարկը՝ Արցախի իշխանութիւնը յայտարարեց, որ պայմանաւորուածութիւն ձեռք բերուած է՝ առաջին՝ երէկ կէսօրէ ետք ժամը 1:00-էն սկսեալ ամբողջութեամբ դադարեցնելու ռազմական գործողութիւնները, երկրորդ՝ ուսուական զօրակազմի տեղակայման վայրէջն հանել, ինչպէս ձեւակերպուած է, «Հայաստանի զինուած ուժերու մնացեալ ստորաբաժանները», լուծարել եւ ամբողջութեամբ զինաթափել Արցախի պաշտպանութեան բանակը, ինչպէս նաեւ դուրս բերել ծանր զինուորական սարքաւորումները Լեռնային Ղարաբաղէն՝ զայն արագօրէն ոչնչացնելու նպատակով: Եւ երրորդ՝ համաձայն ձեռք բերուած պայմանաւորութեան՝ Ազրպեյճանի կողմէ բարձրացուած համարկումի, Լեռնային Ղարաբաղի հայերու իրաւունքներու եւ անվտանգութեան ապահովման, ինչպէս նաեւ Ազրպեյճանի սահմանադրութեան շրջանակներուն մէջ Ղարաբաղի ժողովուրդի կենսագործունէութեան ապահովման հարցերը Ազրպեյճանի իշխանութիւններուն եւ տեղւոյն հայ բնակչութեան ներկայացուցիչներուն միջեւ պիտի քննարկուին վաղը՝ ազրպեյճանական եւլախ քաղաքին մէջ:

Արցախի Հանրապետութեան իշխանութիւնները իրենց այս որոշումը բացատրած են ստեղծուած ծանր իրավիճակով՝ ընդգծելով, որ Ազրպեյճանը, անցնելով լայնածառայ յարձակման, նպատակ դրած է մասնատել Արցախը եւ անդառնալիօրէն վնաս հասցնել անոր կենսունակութեան:

«Երկու օր տեւած յամառ մարտերու ընթացքին Արցախի զինեալ ուժերու ստորաբաժանները հերոսաբար կը պաշտպանուին կենդանի ուժով եւ զէնք-զինամթերքով քանի մը անգամ գերազանցող թշնամիէն՝ պատճառելով անոր մեծագոյն կորուստներ: Դժբախտաբար, կորուստներ եւ վիրաւորներ ունի նաեւ արցախեան կողմը, իսկ որոշ հատուածներու մէջ թշնամին յաջողած է մխրճուել պաշտպանութեան բանակի մարտական դիրքեր, տիրանալ շարք մը բարձունքներու եւ ռազմավարական ճանապարհային հանգոյցներու: Ստեղծուած իրադրութեան մէջ անբաւարար են միջազգային հանրութեան գործողութիւնները՝ պատերազմի դադարեցման եւ իրավիճակի հանգուցալուծման ուղղութեամբ: Հաշուի առնելով այս ամէնը՝ Արցախի Հանրապետութեան իշխանութիւնները կ'ընդունին ուսուական խաղաղապահ առաքելութիւն իրականացնող զօրակազմի հրամանատարութեան առաջարկը կրակի դադարեցման վերաբերեալ», նշուած է յայտարարութեան մէջ:

Արցախի Պաշտպանութեան Բանակի Կազմալուծումը

23 սեպտեմբերին Արցախի տեղեկատուական շտապը տեղեկացուց, թէ ռազմական գործողութիւններու դադարեցման մասին ուսուական կողմի միջնորդութեամբ Ազրպեյճանի հետ 20 սեպտեմբերին ձեռք բերուած պայմանաւորութեան համաձայն ներկայ դրութեամբ ինչ աշխատանքներ կ'իրականացուին:

Ըստ Արցախի տեղեկատուական շտապի, կ'իրականացուին Արցախի պաշտպանութեան բանակի ստորաբաժաններու դուրսբերում մարտական դիրքերէն եւ տեղափոխում մնայուն տեղակայման վայրեր՝ բանակի կազմալուծման աշխատանքներուն զուգահեռ, որոնորակապէս աշխատանքներ զոհուածներու ու անհետ կորուստներու յայտնաբերման ուղղութեամբ, ծանր եւ ծայրայեղ ծանր վիրաւորներու ու հիւանդներու տեղափոխում Հայաստանի բժշկական հաստատութիւններ՝ Կարմիր խաչի միջազգային կոմիտէի ու ուսուական խաղաղապահներու ուղեկցութեամբ:

Հազարաւոր Արցախցիներ Բռնազաղթի ենթարկուեցան Արցախ Աշխարհէն

Արցախ աշխարհէն հայերու բռնի տեղահանման երեւոյթը ստացաւ զանգուածային բնոյթ, հազարաւոր արցախցիներ լքեցին իրենց հայրենի բնօրրանը՝ ապաստան գտնելու համար Մայր Հայաստանի մէջ

Ձեռք բերուած պայմանաւորութեան իրականացումը համաձայն, ուսուական խաղաղապահ զօրախումբը նախանցեալ օր Ստեփանակերտի օդակայանէն մինչեւ Հայաստան ուղեկցած է տեղւոյն բնակիչներու փոխադրակառքերու եւ 41 անձնական ինքնաշարժներու, այս մասին կը տեղեկացնէ խաղաղապահներու թիւերի մասին ալիքը: Խաղաղապահները ուղեկցած են Մարտակերտէն, Ասկերանէն եւ Մարտունիէն Ստեփանակերտ շարժող խաղաղ բնակիչներուն:

Մարտակերտի քաղաքապետ Միշա Գիւրջեանը «Ազատութիւն» ձայնասփիւռի կայանին տեղեկացուցած է, որ



Մարտակերտը ամբողջութեամբ ազրպեյճանցիներուն յանձնուած է: Վերջին բնակիչները այնտեղէն դուրս եկած են շուրջ հազար ինքնաշարժով, եւ երեկոյեան հասած են Ստեփանակերտ: Ինք եղած է շարասիւնի վերջաւորութեան:

Մարտակերտի քաղաքապետը ըսաւ, որ քաղաքային բնակչութեան զոհեր չունին, բայց ունին անհետ կորուստներ: Ան սակայն նշեց, որ դիրքերը պահող զինուորներուն շարքերուն մէջ 20 զոհ ունին:

Ազրպեյճանական լրատուամիջոցները արդէն նախանցեալ երեկոյեան լուսանկարներ հրապարակած էին, թէ ինչպէս ազրպեյճանցի զինուորները Մարտակերտ քաղաքի ցուցանակներ վրայ կ'ամրացնեն Ազրպեյճանի դրօշը:

Արցախի տեղեկատուական շտապը կը յայտնէ, որ Արցախէն Հայաստան տեղափոխուելու ցանկութիւն ունեցող բոլոր քաղաքացիները պիտի ունենան այդ կարելիութիւնը՝ նշելով, որ տեղափոխուելու համար սահմանուած ժամկէտներ չկան:

Ըստ շտապին, առաջնահերթօրէն Հայաստան կը տեղափոխուին ռազմական գործողութիւններու պատճառով տարահանուած, անթիւեան մնացած եւ ծանր կացութեան մէջ յայտնուած ու Հայաստան տեղափոխուելու օգուտ քաղաքացիները:

«Արցախի իշխանութիւնները պիտի շարունակեն մնալ իրենց տեղերը եւ պետական կառավարում իրականացնել այնքան ժամանակ, մինչեւ որ ամբողջութեամբ ապահովեն Հայաստանի Հանրապետութիւն ուղեկորուելու ցանկութիւն ունեցող քաղաքացիներու տեղափոխման գործընթացը», նշուած է յայտարարութեան մէջ:

Հոկտեմբեր 2-ի դրութեամբ Արցախէն Հայաստան մուտք գործած է բռնի տեղահանուած 100 հազար 500 անձ, յայտնեց Հայաստանի կառավարութիւնը:

Միւս կողմէ, Ստեփանակերտ-Ասկերան ճանապարհի յարակից տարածքին մէջ՝ պենզիի պահեստին մէջ, ուժեղ պայթում մը տեղի ունեցաւ Սեպտեմբեր 25-ի երեկոյեան, կը յայտնէ Արցախի արտակարգ իրավիճակներու պետական ծառայութիւնը: Կան զոհեր եւ վիրաւոր-

ներ, այրուածքներ ստացած բազմաթիւ տուժածներ տեղափոխուած են բժշկական հաստատութիւններ:

Յունուարի 1, 2024-ին Արցախի Հանրապետութիւնը կը դադարի գոյութիւն ունենալ. Արցախի նախագահի հրամանագիրը

Արցախի Հանրապետութեան նախագահ Սամուէլ Շահամանեանը հրամանագիր ստորագրեց 2023 թուականի սեպտեմբերի 19-ից ետք ստեղծուած իրավիճակէն բխող կացութեան մասին: Հրամանագրին մէջ կ'ըսուի.

«Ելնելով Արցախի ժողովրդի ֆիզիքական անվտանգութեան եւ կենսական շահերի ապահովման առաջնահերթութիւնից՝ հաշուի առնելով ուսուական խաղաղապահ ուժերի հրամանատարութեան միջնորդութեամբ ձեռք բերուած պայմանաւորութեան ձեռք բերուած պայմանաւորութեան ներկայացուցիչների հետ պայմանաւորուելով, որ Լեռնային Ղարաբաղի բնակիչների, այդ թւում՝ զէնքերը վար դրած զինուորականների ազատ, կամաւոր եւ անխնայ զոհողութեան անցումն ապահովուած է Լաչինի միջանցքի երկայնքով մեքենաների վրայ իրենց գոյքով եւ առաջնորդելով Լեռնային Ղարաբաղի Սահմանադրութեան 93-րդ յօդուածով, որոշուել է.

1 — Մինչեւ 2024 թուականի յունուարի 1-ը լուծարել իրենց գերատեսչական ենթակայութեան բոլոր պետական?? հիմնարկները եւ կազմակերպութիւնները, եւ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետութիւնը դադարում է գոյութիւն ունենալ:

2 — Լեռնային Ղարաբաղի բնակչութիւնը, այդ թւում՝ հանրապետութիւնից դուրս գտնուող բնակչութիւնը, սոյն հրամանագրի ուժի մէջ մտնելուց յետոյ ծանօթանում է Ազրբեյճանի Հանրապետութեան կողմից ներկայացուած վերաինտեգրման պայմաններին՝ Լեռնային Ղարաբաղում մնալու (վերադառնալու) հնարաւորութեան մասին անկախ եւ անհատական որոշում կայացնելու նպատակով:

Սոյն հրամանագիրն ուժի մէջ է մտնում հրապարակման պահից անմիջապէս յետոյ»:

Տարածուեցէք ձեր «հորիզոն»ը

Never Again!

Սիրելի՛ ընթերցող. հետեւեալ տողերը մի՛ ընկալեք իբրեւ զգացական արտայայտութիւն, այլ նկատէ մեր ապրած ԱԶԳԱՅԻՆ ԱՀԱԻՈՐ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ՝ ԱՐՑԱԽԻ ԿՈՐՈՒՍՏԻՆ դէմ ընդվզում, պոռթկում, որ անկասկած համակած է ազգս ամբողջ:

Կասկած չունիմ, որ կայ հայ մը, որ չի գիտակցիր, չ'ըմբռնէր նորագոյն աղէտին պատմական տարողութիւնը, չի բաժնեկցիր այն մտավախութեան, որ կրաւորականութեան եւ ձեռնածալութեան ճամբով խուսափել նոր աղէտներէ: «Զանգե՛ր, զօղանջէ՛ք»-ը հիմա ունի տարբեր հնչեղութիւն:

Մասնաւորաբար ապրիլ 24-ի առիթով մեր աշխարհատարած ցոյցերուն ընթացքին, նաեւ Յեղասպանութեան յիշատակման տարբեր առիթներով, տասնամեակներէ ի վեր հնչեցուցած ենք «Never again!» (Պիտի չկրկնուի) կամքը, ու աշխարհի տարբեր երկիրներու պետական շրջանակներէ ալ գտած ենք համահունչ արձագանգներ: Մեծ ու փոքր պետութիւններ հաստատած են, որ 1915-1923 տարիներուն հայ ժողովուրդը զոհ գացած է Թուրքիոյ պետութեան կողմէ կազմակերպուած եւ գործադրուած պատմական ոճիրին, որ նախատիպարը եղած է նոյն դարուն եւ մինչեւ օրս կրկնուող ցեղասպանական արարքներու: Բոլորն ալ կրկնած են ու կրկնած. Never again!

Եւ սակայն մեր ու աշխարհի աչքերուն առջեւ Ազրպէյճանն եւ նո՛յն Թուրքիան կրկին ու կրկին ռազմական գործողութիւններ կը սանձազերծեն Արցախի ու Հայաստանի դէմ, եւ մենք ու աշխարհը դարձեալ կ'ըսենք. Never again!

— Արցախի 75 առ հարիւրը բռնազրաւելէ ձիջդ 3 տարի ետք Ազրպէյճան վերջնականապէս կը խլէ Արցախը, իսկ մենք ու աշխարհը կ'ըսենք. Never again!

— Արցախի հայ բնակչութեան մօտաւորապէս քառորդը վերջնականապէս գաղթական դառնալէն ուղիղ երեք տարի ետք, մնացեալ արցախցիներն ալ, վերահաս ջարդերէ խուսափելու համար, գաղթական կը դառնան, իսկ մենք ու աշխարհը կ'ըսենք. Never again!

— Արցախի գեղեցիկներն բնակիչները օր ցերկով կը ջարդուին, հայրենի հողը պաշտպանող զինուորներ նահատակ կ'իյնան, եւ մենք ու աշխարհը կ'ըսենք. Never again!

— Բնագաղթուած ժողովուրդը դէպի Հայաստան աքսորի ճամբուն վրայ ենթակայ կը դառնայ անտանելի վիճակի, մանուկներ եւ տարեցներ կը մահանան, ինչպէս եղաւ աւելի քան 100 տարի առաջ ցեղասպանին ձեռքով բռնազաղթի հանուած անտէր զանգուածներուն՝ դէպի Տէր Զօր, Մարիատէ ու այլ սպանդանոցներ առաջնորդուողներուն (բախտաւորութի՞ւն պէտք է սեպել, որ հիմա գաղթը ինքնաշարժով կ'ըլլայ եւ մահացութիւնը նոյնքան համատարած չէ), իսկ մենք ու աշխարհը կ'ըսենք. Never again!

— Բռնազրաւող ոճրագործը, հաւատարիմ մնալով դարաւոր իր սովորութեան, քար ու քանդ կ'ընէ հայկական շէնքեր, կը շարունակէ ջնջել-վերցնել խորհրդանիշներ ու հետքեր, յուշակոթողներ, իսկ մենք ու աշխարհը կ'ըսենք. Never again!

— Ազրպէյճան ստապատիր քարոզչութիւն կը տարածէ, իբր թէ հոգ կը տանի Արցախի հայերուն, ա՛յն «հոգածութեամբ», որ դար մը առաջ Թուրքիոյ պետութիւնը մղեց «պատերազմի պատճառով վտանգուած հայերը ապահով վայրեր փոխադրելու», իսկ մենք ու աշխարհը կ'ըսենք. Never again!

— Ազրպէյճանն եւ Թուրքիա կը պատրաստուին Արցախի ճակատագրին

մատնել Հայաստանը՝ սկսելով Սիւնիքէն, ու մենք ու աշխարհը կ'ըսենք. Never again!

— Never again! Never again! Never again!!!

* * *

Մեր ժողովուրդը դարձեալ զոհ է ցեղասպանական կանխամտածուած եւ լաւապէս պատրաստուած ծրագիր մը: Իրականացումը կը կատարուի աշխարհի աչքերուն առջեւ: Հիմա, լրատուական եւ հաղորդակցութեան միջոցները իրականութեանց բացայայտումը կը կատարեն օրը օրին: Աշխարհը դատապարտանքի յայտարարութիւններով կ'ողողէ լրատուադաշտերը, կը խոստանայ ՄԱՐԴԱ-ՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ զրկել աղէտեալներուն (նուազագոյն սպեղանի, բայց քաղաքական առումով՝ սնամէջ): Վաղը, եթէ ՄԱԿ-ը, Եւրոպական խորհուրդը, Ռուսիա կամ այլք քննիչներ զրկեն ու ստուգումներ կատարեն, առանց յապաղումի պիտի հաստատեն, որ Ազրպէյճան ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ իրականացուցած է Արցախի մէջ: Նոյնը կրնան ընել դեսպանատուները... Պէտք պիտի չըլլայ ամիսներ սպասելու, որ միսիոնարներ, դիւանագէտներ եւ լրագրողներ ականատեսի վկայութիւններ հասցնեն կառավարութեանց, միջազգային կազմակերպութիւններու ու աշխարհի ուշադրութեան, ինչպէս եղաւ Յեղասպանութեան տարիներուն: Նման քննութիւն ո՛չ միայն պէտք է պարտադրել Ազրպէյճանի եւ մեղաւորի Թուրքիոյ, այլ՝ անցնիլ Never again-էն անդին եւ անյապաղ հաշիւ-հատուցում պահանջել, դատապարտել եւ պատժել ոճրագործները: Սա կը պահանջէ Հայաստանի պետութեան ու աշխարհասփիւռ հայութեան համատեղ եւ տենդոտ գործակցութեան:

Կարելի՞ է անտեսել կամ մոռնալ, որ Երեւանի իշխանաւորները աւելի՛ ուղղակի, քան անուղղակի մեղաւոր են պատահածին, ԱՂԵՏԻՆ պատրաստութեան եւ իրականացման: Եւ անգամ մը եւս կը ստիպուինք յիշելու նշանաւոր խօսքը. «Անտառին հարցուցեր են, թէ ինչո՞ւ կու լայ, պատասխաններ է՛ կացի-նին կոթել ինձմէ՛ է»: (Այս սիւնակին մէջ չենք ուզեր այդ երեսին վրայ երկար կանգ առնել, ամէն բան բացայայտուած է՛ աչք եւ ուղեղ ունեցողներուն համար):

Եթէ գլխաւոր մեղաւորը Ազրպէյճանն ու Թուրքիան են, նաեւ՝ անոնց կամակատար-գործակիցին վերածուած Երեւանի իշխանաւորները, պէտք է ընդունինք, որ հայութիւնն ու աշխարհը ունին պատասխանատուութեան իրենց բաժինները: Աշխարհը՝ կրաւորական «խանդաղատանք»-ի եւ խօսքի ապուր-ներով մեզ կերակրելուն, իսկ հայութիւնը՝ անզօրութեան սահմաններէն անդին չանցնելուն, «ի՞նչ կրնանք ընել»-ի քարոզչութեամբ տարուելուն համար:

* * *

Երեւանի իշխանութիւնները հիմա կրնան ինքնարդարացումի երթալ՝ ըսելով, որ մենք 40 հազար գաղթական պատսպարելու պատրաստակամութիւն թիւը անցած է 50 հազարը, շուտով կը հասնի հարիւր հազարի: Ի՞նչ կ'ուզէք, որ ընենք ասկէ աւելի: Պիտի գգաստանա՞ն եւ անդրադառնա՞ն, որ եղածը նա՛եւ իրենց ձեռակերտն է, որովհետեւ «Արցախը Ազրպէյճանին կը պատկանի» յայտարարելով՝ վերցուցին փանթուրանականութեան դէմ դարաւոր արգելքը: Եւ այս «իրագործում»-ին մէջ ո՛չ պէտք է նախկիններ փնտռել, ո՛չ ալ մրցումի ելլել բարեկամներ ու դաշնակիցներ մեղադրելով:



Ինչի՞ կը ծառայեն Երեւանի ու Թուրքիոյ եւ այլոց միջեւ հեռաձայնային եւ այլ հաղորդակցութիւնները, երբ Արցախը դուրս մղուած է օրակարգէն: Անդին՝ յստակ են Պաքուի հետ Մոսկուայի, Ուաշինկթոնի եւ Եւրոպացիներուն հաղորդակցութեան առանցքները: Ամէն բան կը թաւալի առեւտուրի եւ շահագրգիռական այլ հաշիւներու շուրջ: Բարձրաձայն կը խօսուի ճամբաներու բացման տարբերակներու մասին, իսկ Հայաստան հազիւ թէ կ'երեւի լուսանցքի վրայ:

Հայաստանի մէջ վերջին օրերուն նկատեր են, որ Թուրքիա եւ Ազրպէյճան, Արցախի վերջին պատասխանի խլումէն ետք, նուազեցուցած են «Զանգեղուրի միջացանք»-ին ուժով տիրանալու մասին հուստարաբանութիւնը: «Բէք-աղէ՛կ», պիտի ըսէ բարեմիտ հայը: Սակայն ո՞վ է այն ցնորամիտը, որ պատրաստ է գրաւ դնելու եւ յոյս կապելու նման նախատեսութեան, երբ իրագեկներ բաց աչքերով տեսան, թէ երկու օր առաջ էրտողան եւ Ալիեւ նոր ծրագրերներու մշակման հանդիպում ունեցան Նախիջևանի մէջ, ազերիական ուժերը կազմ ու պատրաստ կը սպասեն սահմանի երկայնքին, հաւանաբար Փաշինեան-Ալիեւ մօտալուտ հանդիպումին սեղանը կը պատրաստուի՝ Երեւանէն այս ուղղութեամբ նոր գործակցութիւն, իմանալ՝ զիջում ապահովելու դիտաւորութեամբ, իսկ ազերիական քարոզչական մեքենան կը յայտարարէ, որ գաղթող արցախցիները կ'ապաստանին «Արեւմտեան Ազրպէյճան», եւ սա արդէն մտահոգիչ այլ գարգացումներու մասին նոր ահազանգ է:

* * *

Այս խորապատկերին առջեւ Never again-ը տարբեր հնչեղութիւն ունի հիմա: Ա՛յն հնչեղութիւնը, որ 27 սեպտեմբերին լսուեցաւ Եւրոպային, ուր գացեր էին ճիշդ 3 տարի առաջ շղթայագերծուած 44-օրեայ պատերազմի նահատակներուն ընտանիքները եւ անոնց յիշատակը յարգող հայրենապաշտպան աւագանին: ՔՊ-ականներ ու անոնց պետը այս տարի չէին համարձակած Եւրոպայի բարձրանալ, որովհետեւ «ուսապարկի»-ի մը իսկ խոստովանութեամբ՝ «Ինչո՞ւ գան, քանի մը օր առաջ երկու հոգի

եկան, ծեծ կերան եւ հեռացան»: Իսկ կարելի՞ է մոռնալ, թէ տարի մը առաջ նահատակներու մայրեր ինչպիսի՞ խժոժութեան ենթարկուեցան սրբավայրին մէջ, երբ փորձեցին արգելք ըլլալ Փաշինեանի եւ խմբակիցներուն Եուրոպայի մուտքին:

ՔՊ-ականները այլապէս ալ ծեծ կերան քաղաքական դաշտի մէջ, Երեւանի ընտրութիւններուն ու օր ըստ օրէ ծաւալող ժողովրդային ընդվզումի ալիքին լոյսին տակ, ուր նորահունչ Never again-ը կը կրկնուի: Այս գարգացումները հայրենապաշտպաններուն իրաւունք կու տան ըսելու, որ նման ծեծեր պէտք է տրուին Again and again, այսինքն՝ կրկին ու կրկին, որպէսզի հայրենքին ու ազգի՛ փրկութեան ճիգերը չմատնուին նախորդ փորձերու ճակատագիրին:

Իշխանաւորներու քարոզչութիւնը պէտք է իր դիմաց գտնէ, եւ պիտի՛ գտնէ հայրենիքին տիրութիւն ընող գիտակից եւ զարթնող զանգուածը: Պէտք է դուրս գանք այն ինքնախաբէութենէն, ինքնաողորմումի հոգեբանութենէն, թէ՛ «Եղածը այնքան ցնցիչ է, որ երկար ժամանակի կը կարօտինք խորաչափելու աղէտին տարողութիւնը»: Մասնաւորաբար իշխանական շրջանակին կողմէ հրապարակ նետուած այս յանկերգը, որ կը շարունակէ արձագանգ գտնել մեկնաբաններու ու կարգ մը մտաւորականներու քով, պէտք է դուրս շարունակ մեր քաղաքական կամքէն եւ գործնապէս մերժենք նահանջներու ու պարտութիւններու կրկնութիւնը: Նոյն կամքով ճամբայ պիտի հանենք հայրենիքին ու ազգի՛ն փրկութեան, վերականգնումին եւ իրաւունքներու կենսագործման հերակլէսեան առաքելութիւնը՝ իրապաշտ «ճամբու քարտէս»-ի մը արագ ձեւաւորումով, ի մի բերելով հայրենաբնակ ու արտերկրի հայութեան ձեռքերը: Փաշինեանի եւ գործակիցներուն պէտք է արգելիլ Mission accomplished (առաքելութիւնը յաղողութեամբ ամբողջացած է) յոխորտանքը, որովհետեւ գիտե՛նք, թէ անոնք ինչպիսի՞ առաքելութիւն մը իրականացնելու համար իշխանութեան բերուած են աւելի քան 5 տարի առաջ:

Ս. ՄԱՀՍԷՐԻՆԵՄԵԱՆ
27 սեպտեմբեր 2023

Համազգայինի 95-ամեայ նպատակալաց առաքելությունը

«Համազգայինի վերապահում է մեծ դեր՝ ստեղծել աշխարհիկ հայություն, որ կառուցվում է ազգութեան, յեմարանը դառնայ հայ դպրոցին ու մշակոյթին եւ հաւատք ունենայ Հայ դատի յաղթանակին»:
Նիկոլ Աղբալեան

Հայ մշակոյթի եւ կրթութեան դարձնոց Համազգայինը այս տարի կը նշէ իր 95-ամեայ յոբելեանը:

Հայ ժողովուրդի գոյատեւելիութեան գլխաւոր բաղադրիչներէն են մշակոյթը, մայրենի լեզուն, ազգային ինքնութիւնը ու ազգագրական կենցաղը:

Հայոց Յեղասպանութեան արհաւիրքէն եւ Առաջին Հանրապետութեան կորուստէն ետք, սփիւռքի տարածքին հայ մշակոյթի պահպանման, տարածման ու զարգացման նպատակաւ ուղղուած գործունէութիւն ծաւալեց Համազգային Հայ կրթական եւ Մշակութային Միութիւնը: Միութեան հիմնադիրներ Լեւոն Շանթը, Նիկոլ Աղբալեանը, Վահան Նաւասարդեանը, Համօ Օհանջանեանն ու իրենց դաշնակցական գործընկերները յստակ տեսլականը ունէին, որ Միջին Արեւելքի եւ այլ սփիւռքահայ ուստաններու մէջ գաղթական հայութեան համար անյետաձգելի անհրաժեշտութիւն է հայապահպանման կառոյց մը ստեղծելու հրամայականը: Գիտակից էին, որ հայապահպանման ենթախաբիսը՝ հայեցի դաստիարակութիւնն է, ազգային դաստիարակութիւնը: Ճիշդ այդ նպատակով, միութեան հիմնադրութենէն երկու տարի անց, Պէյրութի մէջ հիմը կը դրուէր սերունդներու հայակերտման դարձնոց, աւանդատուն հայկազեան, հայ դպրութեան ջահակիր ձեմարանին:

Յաջորդող տասնամակներուն, Համազգայինի առաքելութեան ուխտապահներուն շնորհիւ, սփիւռքի տարածքին ծաւալեցաւ բազմաբեւեռ մշակութային եւ կրթական գործունէութիւն: Հիմնուեցան տպարաններ, թատերախումբեր, երգչախումբեր, պարախումբեր, գրական ամսագրեր, կրթական օժանդակներ: Թափ ստացան հրատարակչական աշխատանքները եւ հայագիտութեան զարգացման ուղղուած նախաձեռնութիւնները: Հուսկ ապա, հայրենիքի եւ Արցախի մէջ իր գործունէութեան ծաւալումով, Համազգայինը իր բազմաբեւեռ գործունէութեամբ նպաստեց հայ մշակոյթի տարածման:

Համազգայինը իր առաքելութիւնը իրագործեց առանց պետական նեցուկի, իրագործեց հայ մշակոյթի նուիրեալներով, կամաւորներով, լուսամիտ բարերարներով: Համազգայինի շնորհիւ ստեղծագործեցին գրագէտն ու գեղանկարիչը, դերասանն ու բեմադրիչը, խմբավարն ու երգչախումբը, պարուստյցն ու պարախումբը:

Հայ մշակոյթի պահպանման, տարածման ու պանծացման ազգանուէր գործին նուիրուած Համազգայինի ճանապարհը անկասելի է: Օրուան շարժման հետ համահունչ, յաւելեալ ճիգերով միութեան շարքերուն մէջ երիտասարդներու ներգրաւումը էական անհրաժեշտութիւն է, որուն առնչութեամբ Համազգայինի պատգամաւորական ժողովներէն մէկը երիտասարդացման ուղղուած յատուկ ծրագրի մշակման առաջադրանք ներկայացուցած է: Այլ գետնի վրայ, ողջունելի պիտի ըլլայ Հիւսիսային Ամերիկայի մէջ դպրութեան ամրոցի մը հիմնադրումը, Համազգայինի ձեմարանի մը ընձիւղումը՝ սփիւռքահայ սերունդներու հայեցի կրթութեան ու ազգային նկարագրի անխաթար պահպանման ի խնդիր:

Եւ ահա, այսօր, 95-ամեայ նպատակալաց իր առաքելութեամբ, Համազգայինը կը մնայ պատնէշի վրայ, իր ողջ ներուժը ի սպաս դրած հայութեան ու հայրենիքին:

«Հորիզոն»ի խմբագրական

Կողքիդ Ենք՝ Արցախ, Կողքիդ Ենք՝ Արցախահայուի՛ւն

Արցախահայութեան եւ Արցախ աշխարհի կողքին կանգնելը միայն կարգախօս մը չէ, որ բարձրացուած է Պուրճ Համուտի քաղաքապետարանի հրապարակին վրայ: Անիկա կեանքի ու պայքարի ուղի մըն է, որ լիբանանահայութիւնը գործնապէս ապրեցաւ ամբողջ 35 տարի շարունակ: Այն օրէն, երբ 1988 փետրուարին ազգանշանը տրուեցաւ Արցախեան շարժումին: Այն օրէն, երբ այդ շարժումը մարելու համար Սոււկաշիթի, Գանձակի, Պաքուի եւ քաղաքներու մէջ Ազգայէյճանի կազմակերպած ահաւոր ջարդերէն ետք 1990-ին ազատամարտը մտաւ պատերազմի փուլ: Այն օրերէն, երբ լիբանանահայ երիտասարդներ մասնակցեցան ազատամարտին, եւ անոնց շարքերէն ինկան նահատակներ՝ Վիգէն Զաքարեանը եւ Մհեր Զուլհաճեանը: Լիբանանահայութիւնը Արցախի Հանրապետութեան հիմնադրութեան առաջին իսկ օրէն արդարօրէն հպարտացաւ հայկական երկրորդ հանրապետութեան ձեռքբերումներով, տիրեցաւ ձախողութիւններով: Իր կարողութեան սահմաններուն մէջ մասնակցեցաւ Արցախը Մայր հայրենիքին միացնող մայրուղիներու շինարարութեան աշխատանքին եւ վերաբնակեցման բազմաթիւ ծրագրերուն: Լիբանանահայութեան նաեւ մեծ դեր վիճակուած էր ապակեդրոնացեալ համագործակցութեան ձեռքով մէջ արցախեան եւ լիբանանեան քաղաքներու ու գիւղերու միջեւ յուշագիրներու ստորագրութեան եւ գանձը ի գործ դնելուն մէջ: Լիբանանը նստաւայրը եղաւ Մերձավոր Արեւելքի մէջ Արցախի Հանրապետութեան մնացուն ներկայացուցչութեան: Եւ երբ մարտի ահազանգը հնչեց 2020 թուականի 44-օրեայ պատերազմին, լիբանանահայութիւնը դարձեալ առաջին շարքերուն վրայ էր՝ հայրենիքի պաշտպանութեան համար դրամահաւաք կազմակերպելու, նոր նահատակներ տալու թէ՛ ռազմագերիներ ունենալու իմաստով:

Հիմա ամբողջութեամբ տարբեր է կացութիւնը: Հայկական առօրեային մէջ, Հայաստանի իշխանութիւններու մակարդակին վրայ տիրող յանձնառուական եւ պարտուողական գործելակերպին պատճառով, թուրք-ազդպէյճանական ցեղասպան դաշինքին հետեւողական նկրտումներուն իբրեւ հետեւանք եւ համաշխարհային հանրութեան լուռ անտարբերութեան լոյսին տակ Արցախ աշխարհը գտնուեցաւ անելանելի կացութեան առջեւ: 9 ամիս շարունակ Ազգայէյճանի բռնատիրական վարչակարգը Արցախի դէմ բանեցուց ամբողջական շրջափակում՝ ծունկի բերելու համար հերոսական ժողովուրդը: Ամբողջական շրջափակումէն եւ արցախահայութիւնը սովի ենթարկելէ 9 ամիս ետք բռնատիրական վարչակարգը 19 սեպտեմբերին բիրտ ուժի եւ պատերազմի դիմեց Արցախը իրեն ենթակայ դարձնելու եւ պարտադրելու իր նպատակին իրագործումը՝ կազմաքանդել Արցախի Հանրապետութիւնը եւ անոր պաշտպանութեան բանակը: Դժբախտաբար Պաքուի բռնատէրը հասաւ իր նպատակին: Ասիկա նաեւ պատճառ դարձաւ, որ արցախցիները զանգուածաբար բռնի տեղահանման ենթարկուին: Մինչեւ այս պահը Արցախի բնակչութեան կարեւոր մէկ մասը արդէն լքած է իր պատմական բնօրրանը եւ ապաստանած է Մայր Հայաստան:

Լիբանանահայութիւնը անցնող ինը ամիսներուն ալ ամբողջապէս եւ հապէս գտնուեցաւ վիրաւոր արցախահայութեան կողքին՝ քաղաքական, հոգեւոր թէ՛ կուսակցական մակարդակներու վրայ: Այս ամբողջ ժամանակաշրջանին նախ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. կաթողիկոսը, ապա հայ քաղաքական երեք կուսակցութիւնները մնայուն զօրաշարժի եւ ցուցական աշխատանքի նախաձեռնութիւններ որդեգրեցին՝ նախ լիբանանեան հասարակական կարծիքը իրազեկ դարձնելու Արցախի մէջ տեղի ունեցող իրադարձութիւններուն գծով, ապա միջազգային հանրութիւնը մղելու գործնական աշխատանքի՝ Արցախի վրայ պարտադրուած ապօրինի շրջափակումը վերացնելու համար:

Բայց հինգշաբթի, 28 սեպտեմբերին ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէին կազմակերպութեամբ Լիբանանի մէջ Ազգայէյճանի դեսպանատան առջեւ լիբանանահայութեան կատարածը պահանջատիրական իւրայատուկ ելոյթ մըն էր, որ իր մէջ կը կրէր պատգամներ՝ զանազան ուղղութիւններով: Ժողովուրդային պահանջատիրական այդ հաւաքը սփիւռքահայութեան սիրտ լիբանանահայ գաղութի բարկութեան եւ ցասումի ճիչն է՝ ուղղուած Պաքուի ցեղասպանական քաղաքականութիւններուն դէմ: Անիկա զօրաւոր ճիչն էր լիբանանահայութեան՝ ընդդէմ հայկական իրականութեան մէջ բոյն դրած յանձնառուականութեան եւ պարտուողականութեան: Անիկա զօրաւոր ճիչն էր համաշխարհային անտարբերութեան դէմ, համաշխարհային երկերեսանիւթեան դէմ, համաշխարհային կեղծաւորութեան եւ դիւանագիտական գեղեցիկ ժպիտներուն դէմ: Մենք՝ հայերս, այդ գեղեցիկ ժպիտները եւ «խոր մտահոգութիւնները» աւելի քան հարիւր տարիէ ի վեր վկայած ենք: Այդ գեղեցիկ ժպիտներով եւ «մտահոգ կեցուածքներով» մեծ պետութիւններու կեղծաւոր դիւանագիտութիւնը աւելի քան հարիւր տարուան մէջ քանի անգամ թուղթէ շերեփով ի գուր փորձած է մեզի հերիսա կերցնել:

28 սեպտեմբերին լիբանանահայութեան արձակած բողոքի, ցասման ճիչը օղակին մէջ մասն է միայն: Յառաջիկայ օրերուն աշխարհի զանազան հայաբնակութիւններուն մէջ կը սպասուի ցուցական գործունէութիւններու շարք մը՝ ըսելու համար, որ հայութիւնը հայկական Արցախի կողքին է, որ մէկն ալ, որքան ալ գերհզօր բռնատէր ըլլայ, չի կրնար ինքնորոշման իրաւունքը խլել Արցախի բնիկ ժողովուրդէն: Լիբանանի մէջ համախմբուեցանք, աշխարհի տարածքին ալ պիտի համախմբուինք, բարձրաձայն ո՛չ ըսելու արցախահայութիւնը հպատակեցնելու, գայն բռնի տեղահանութեան ենթարկելու, անկախ Արցախը բռնադաւաճելու եւ անոր կառոյցները կազմաքանդելու Ազգայէյճանի քաղաքականութեան դէմ: Լիբանանահայութիւնը, հապէս պահանջատիրական բնոյթ կրող իր բողոքի հաւաքին ընթացքին ինկած իր վիրաւորներուն արեան գնով վկայեց, որ Արցախի մէջ այս օրերուն տեղի ունեցածը պայքարի վերջը, աւարտը չէ, այլ հայութեան բոլորանուէր ճիգերով եւ ցասումին ճիշդ ուղղորդումով պայքարը նոր թափով պիտի շարունակուի:

ԺԱԳ ՅԱԿՈՒԲԵԱՆ

«Օգնենք Արցախի ընտանիքներուն».

ԴՐԱՄԱՀԱՒԱՔԻ ԿՈՉ

Միւրելի՛ հայրենակիցներ,
Արցախի ճգնաժամը ծանր և անդառնալի կորուստներ հասցուց Արցախի առիւծափրտ ժողովուրդին:
Պատմական Հայաստանի անբաժան մէկ մասնիկը համարուող արծուաբերդ Արցախը այսօր կ'ապրի մեր պատմութեան սեւ օրերը: Տասնեակ հազարաւոր հայ ընտանիքներ կը տարահանուին իրենց բնօրրանէն եւ ապաստան կը գտնեն Հայաստանի հանրապետութենէն ներս:
Պարզ բառերով կարելի չէ նկարագրել ստեղծուած ծանրակշիռ իրավիճակը, որուն մատնուած են մեր հայրենակիցները: Անոնք մեր բարոյական աջակցութեան, զօրակցութեան եւ յատկապէս մեր նիւթական օժանդակութեան կարիքը ունին:
Պարզ բառերով կարելի չէ նկարագրել ստեղծուած ծանրակշիռ իրավիճակը, որուն մատնուած են մեր հայրենակիցները: Անոնք մեր բարոյական աջակցութեան, զօրակցութեան եւ յատկապէս մեր նիւթական օժանդակութեան կարիքը ունին:
ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային վարչութիւնը կոչ կ'ուղղէ բոլորիդ նուիրատուութիւններու միջոցաւ աջակցելու Արցախի ընտանիքներուն: Ձեր նիւթական օժանդակութիւնը կրնաք ուղարկել.–

- 1) Վճարագրով՝ ARS Foundation–ին, հետեւեալ հասցէին՝
Armenian Relief Society of Canada
3401 Olivar Asselin, Montreal, QC, H4J 1L5
- 2) Այցելելով ՀՕՄ-ի Գանատայի Շրջանի կայքէջը՝ <https://ars-canada.ca/>
սեղմելով Donate Now կոճակը, ապա ընտրելով Aid to Artsakh fund–ը՝
- 3) Ե-փոխանցումով (E-transfer), ՀՕՄ-ի Շրջ. Վարչութեան Ե-նամակի հասցէին՝ ars-canada@bellnet.ca

Բոլոր պարագաներուն կը խնդրենք նշել, թէ՛ դուք ձեր նուիրատուութիւնները կը կատարէք Արցախի ընտանիքներու օժանդակութեան (Artsakh fund), որուն դիմաց պիտի ստանաք տուրքէ զերծ ստացազիր:

ՀՕՄ-ի Գանատայի Շրջանային Վարչութիւն
26 Սեպտեմբեր, 2023

CAMAM
3401, Olivar Asselin, Montréal, Qc H4J 1L5
397, boul. des Prairies, Laval, Qc H7N 2W6
45 Hallcrown Place, Willowdale, On M2J 4Y4
To donate online www.camam.org



ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՆ ՄԷՋ

ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Ջ. ՏԱՐԻ, ԹԻՒ 11, Հոկտեմբեր 2023



ՅԱՐԱՏԵԻ ՄՐՅԱՎԱԶՔԻ ՄԷՋ ՄՆԱԼ

Կենդանի հաւատքի եւ յաւիտանական մշտնջենական լոյսի տարածիչը՝ Պօղոս Առաքեալ կորնթացիներուն ուղղած իր առաջին նամակին մէջ հետեւեալը կ'ըսէ.

«Մրցադաշտին վրայ վազող մասնակիցներուն օրինակը գիտէք չէ՞: Վազելը՝ բոլորն ալ կը վազեն, բայց մրցանակը մէկ հոգի կը շահի: Այնպէս վազեցէք որ մրցանակին հասնիք» (Ա. Կորնթ. 9:24):

Քրիստոսի հետեւողի կեանքը կը նմանի հոգեւոր մրցավազքի: Մրցավազքի ժամանակ պէտք է ամէն խոչընդոտ, որ կը խանգարէ մեզի, մէկ կողմ դնենք, աւելի արագ վազելու համար: Այդ խոչընդոտը հիմնականօրէն մեղքն է: Իրաքանչիւր մեղք մէկ կողմ պէտք է շարտենք, որքան ալ ան փոքր ըլլայ: Որովհետեւ փոքր մեղքերը կամաց-կամաց կը մեծանան եւ մեզ փորձութեան մէջ կ'ընկղմեցնեն: Հոգեւոր մրցավազքի ժամանակ, իրաքանչիւր վազող, երբ իր աւարտին կը հասնի, նոյն մրցանակին կը տիրանայ՝ յաւիտենական կեանքին: Հետեւաբար երբ Յիսուս Քրիստոսի համար վազենք՝ արագ վազենք եւ մեր հայեացքը իրեն դարձնենք, այսինքն՝ մեր աչքերը Յիսուս Քրիստոսի ուղղենք: Երբեք չչեղենք մեր հայեացքը, այլապէս չենք կրնար հասնիլ մրցավազքի աւարտին ու յաղթանակին:

Յիսուս Քրիստոսն է մեր հաւատքի հեղինակը՝ առաջնորդը: Ան հիմքը դրաւ մեր հաւատքին՝ Իր Ծնունդով...:

Ինչ որ ուզենք կրնանք գտնել Քրիստոսի մէջ: Ան ունի ամբողջական յոյսը, սէրը, շնորհքը, ուժը, զօրութիւնը, իմաստութիւնը, համբերութիւնը, առաջնորդութիւնը, ուրախութիւնը, տոկոնութիւնը, ներողամտութիւնը, որոշումը, համարձակութիւնը եւ հեզութիւնը, այն ինչին, որ մենք կարիքը ունինք: Ամէն առաքինութիւն իր մէջ կը գտնենք: Ամէն լաւ բան որուն կարիքը ունինք, Յիսուսը ունի իր մէջ:

Ան է մեր Փրկիչը, առաջնորդը մեր փրկութեան:

«Եկէք մեր աչքերը յառնէք Յիսուսին»,

Որովհետեւ Անոր մէջ ուժ կայ, հետեւաբար զօրանանք Իրմով:

Անոր մէջ ճշմարտութիւն կայ, հետեւաբար սորվինք իրմէ եւ նայինք Իրեն:

Անոր մէջ շնորհք կայ, հետեւաբար ստանանք Իրմէ:

Անոր մէջ անսահման հարստութիւն կայ, հետեւաբար թօթափենք աղքատութիւնը:

Անոր մէջ զօրութիւն կայ, հետեւաբար տկար ըլլանք Իր նկատմամբ:

Մտածենք, որ ամէն օր նոր պատերազմի մը մէջ կը ներքաշուինք, ամէն օր նոր մրցավազքի մէջ կ'ըլլանք: Սակայն, եթէ մեր հայեացքը սեւեռենք Յիսուս Քրիստոսի, չենք յուսահատուիր, չենք յոգնիր մեր վազքին մէջ, որովհետեւ այդ վազքը մեզ կը հասցնէ դէպի Խաչ՝ վերջնագիծին, որմէ յետոյ պիտի նստինք Յիսուս Քրիստոսի կողքին՝ երկնքի մէջ, Դրախտի մէջ, եւ մեր գործը իր աւարտին կը հասնի եւ կը շահինք վերջնական յաղթանակը:

ԲԱՐԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Մարդկային փոխարաբերական կեանքին ամէնէն էական եւ յատկանշական երեւոյթներէն մէկը՝ վստահութիւնն է: Մարդը ընկերային արարած ըլլալով, միշտ կարիքը ունի անծի մը կամ անծերու, որոնց կը վստահի եւ կրնայ անոնց հետ կիսուիլ իր առօրեայ մտահոգութիւնները եւ կամ ուրախութիւնը:

Վստահիլ կը նշանակէ հաւատալ, նուիրուիլ, յարգել, յուսալ, սերտօրէն կապուիլ:

Մարդ արարածին վստահութիւնը հաստատուած կ'ըլլայ հաւատարմութեան վրայ: Վստահութիւնը նաեւ հաստատուած կ'ըլլայ բարեկամներու գաղտնապահութեան եւ լուրջութեան վրայ, որ ինքնին վստահութեան հիմքն է:

Որքան, որ մարդկային փոխարաբերութեան մէջ վստահութիւնը կարեւոր է, նոյնքան եւ աւելի Աստուած-մարդ յարաբերութեան մէջ իր կարեւորութիւնը ունի վստահութիւնը:

Ստեղծագործութեան պսակը մարդ արարածն է: Արարիչը Աստուած մարդ արարածը ստեղծելէ ու անոր ռունգերուն շունչ փչելով անոր վերակացու կարգեց աշխարհին: Աստուած մարդուն վստահեցաւ իր ստեղծագործութիւնը: Մարդը սակայն, չկրցաւ պահել Աստուծոյ նուիրական պատուէրը, անհաւատարիմ գտնուեցաւ եւ անհնազանդութեան պատճառով կորսնցուց Աստուծոյ վստահութիւնը:

Մարդ արարած իր անհնազանդութեան պատճառով վտարուեցաւ դրախտէն, սակայն Աստուած շարունակեց հաւատարիմ մնալ մարդուն, զայն անօգնական չձգեց, ընդհակառակն անոր կողքին եղաւ, Իր հայրական պատուէրներով ու թելադրութիւններով առաջնորդեց մարդուն կեանքը:

Յարմար ժամանակին մինչեւ իսկ Իր Միածին Որդին դրկեց, որպէսզի մարդոց ցոյց տայ, թէ մարդ միայն Իրեն վստահելով կրնայ առաջնորդուիլ:

Քրիստոս աշխարհի գալով ցոյց տուաւ մարդկութեան, թէ Աստուած հաւատարիմ է իր խոստումներուն:

Քրիստոս աշխարհի գալով մարդկութեան ցոյց տուաւ, որ ինքն է գաղտնիքներու քննիչը եւ իրեն կրնանք վստահիլ մեր սրտին խորքը եղած բոլոր ծածուկ խորհուրդները:

Պօղոս Առաքեալ Հռոմայեցիներուն ուղղած իր նամակին մէջ կ'ըսէ. «Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կրնայ մեզի հակառակ ըլլալ» (Հռ 8.31): Եթէ Աստուծոյ վստահութեամբ սպառազինուած ենք, եթէ վստահութիւն ունինք, որ մեր կեանքի բոլոր հանգրուաններուն, իրաքանչիւր քայլափոխին, մեր դիմաց գտնուող իրաքանչիւր մարտահրաւերին Աստուած մեր կողքին է, մեզ կը սատարէ, Իր «ցուպը» մեզ կ'առաջնորդէ ու «գաւազնը» կը պաշտպանէ, այլեւս ո՞վ կրնայ խանգարել մեր ընթացքը, ո՞վ կրնայ խոչընդոտել մեզ մրցավազքի ժամանակ: Ո՛չ մէկ զօրութիւն: Ինչպէս, որ Դանիէլ Մարգարէի բանտարկութեան ժամանակ արիւծներուն բերանը գոցեց, ինչպէս պատանի Դաւիթին զօրութիւնը տուաւ հսկայ Գողիաթը տապալելու, ինչպէս Սեդրաքը, Միսաքն ու Աբեղնազովը սովորականէն եօթնապատիկ բորբոքած հնոցէն ազատեց, մեզ ալ կ'առաջնորդէ:

Վստահիլը Աստուծոյ եւ կը վայելենք յաւիտենական հանգիստն ու փրկութիւնը:

ՀԱՅՐ ՅԱԿՈԲ

ՈՍԿԵՂԷՆ ՀԱՄԱՐ

«Գալով ինծի, քան լիցի որ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի խաչէն զատ ուրիշ բանով պարծենամ: Այդ խաչին միջոցաւ աշխարհը մեռած է այլեւս ինծի համար, ինչպէս եւ մեռած եմ աշխարհին համար»:

Գաղափրացի 6.14

“May I never boast except in the cross of our Lord Jesus Christ, through which the world has been crucified to me, and I to the world.”

Galatians 6:14





ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՎԱՐԴԱՊԵՏԸ՝ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՈՐԿ ՆԱՐԵԿԱՑԻՆ (951-1003)

«Մատեան Ողբերգութեան» պոէմի գեղարուեստական հրաշակերտ ամբողջութեան մէջ, մեծ նշանակութիւն ունի նաեւ Նարեկացիի բառաստեղծման անսպառ կարողութիւնը: Նարեկացիէն առաջ, բուն բանաստեղծութեան լեզուն շատ անելի աղքատ էր: Ան, իր ստեղծագործ կարողութեամբ եւ երեակայութեան անսահման թոյլիքով՝ նոր բառերով հարստացուց ժամանակի գրական լեզուն, որ հասած էր պատմիչներու, եկեղեցական գրողներու ու բանաստեղծներու գործերուն մէջ:

«Մատեան Ողբերգութեան» անկրկնելի պոէմով Նարեկացին դատուեցաւ համաշխարհային գրականութեան մէջ մարդկայնօրէն դրականի ու կատարելի մեծ երգիչներէն մէկը: Պոէմի գեղարուեստական մեծութեան ամենացայտուն ապացոյցներէն է մեր գրականութեան վրայ ձգած անոր մեծ ազդեցութիւնը, իրմէ ստրկված են ոչ միայն միջնադարի, այլև նոր ժամանակներու հայ բանաստեղծութեան խոշորագոյն դէմքերը՝ Թումանեան եւ Իսահակեան, Սիւսանյոս, Վարուժան եւ Մեծարեան, Տէրեան եւ Չարեան:

Նարեկացին Միսաք Մեծարեանի պաշտամունքն էր, Նարեկը՝ անոր սեղանի գիրքը: «Նարեկացին գիտէ ծովածայն հնչեցնել բառերը», - ըսած է Մեծարեանը, իսկ Պարոյր Սեւակի կարծիքով, «Միայն իր մի քանի Տարով Նարեկացին կը դառնար մեր առաջին մեծ բանաստեղծը: Բայց նա կերտեց նաեւ իր «Մատեանը», որ մեր բանաստեղծութեան Աղթամարա վանքն է՝ լոկ այն զանազանութեամբ, որ «Մատեան»ն անկործանելի է ստուգապէս»:

«Մատեան Ողբերգութիւն»ը կամ ինչպէս ժողովուրդը կ'անուանէ՝ Նարեկը, շքանշանաւ աղօթքի գիրք մըն է, որ կը բուժէ մարմինն ու հոգին, առողջութեան խնդրանք մը՝ ուղղուած Աստուծոյ, որուն միջոցով Աստուծոյ շնորհը կը սկսի ներգործել եւ հիանդին ապաքինում պարգեւել:

Ուիլիամ Սարոյեան կը պատմէ, - «Քանի մը տարի առաջ Պէյրուս էի, խնդրեցի, որ ինձի համար Նարեկացի կարդան: Երկու-երեք ժամ կարդացին: Կը լսէի, քիչ բառեր կը հասկնայի, բայց կրակի պէս կը վայելէի»...

Վահագն Դաւթեան կը յիշատակէ, - «Մայրս հիւանդ էր, ասաց բեր, վրաս մի երկու բերան Նարեկ կարդա՛... Ձեռքիս տակ աշխարհաբար թարգմանութիւնն էր: Բերի, սկսեցի կարդալ, մի քիչ լսեց ու ասաց. «Այդ Նարեկ չէ, չեմ հասկանում, տղաս»»:

Գրաբարը բերի, - «Ահա, այդ Նարեկ է, այդ հասկանում եմ» ...այ մեր, ասացի, այդ ես հագի եմ հասկանում, դու ինչպէս ես հասկանում... «Հասկանում եմ», ասաց: Անգրագէտ մայրս այսօրուայ լեզուով թարգմանուած Նարեկը չէր հասկանում, բայց գրաբարը հասկանում էր...

Գրականագէտ Հրաչեայ Թամրազեանի կարծիքով, «Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ», ահա այս է շուրջ 11 դար առաջ ստեղծուած եւ մինչ օրս իր տեսակին մէջ եզակի, խորհրդաւոր ու պաշտելի, աստուածային ու ժողովրդական գիրքի պարզ մեկնաբանութիւնը, զոր տուած է ինքը՝ սուրբերու շարքին դասուած Գրիգոր Նարեկացին: Անոր «Նարեկ»ը այն գիրքն է, զոր համարած են «դէղ կենաց» եւ անելի շատ ոչ թէ կարդացած, այլ պաշտամունքի առարկայ դարձուցած, որպէս աղօթագիրք ու բժշկարան, ողջ մարդկութեան տրուած հրաշալի նուէր մը, երկրորդ Աստուածաշունչ:

Խօսքը հօգորգոյն բուժական միջոց է: «Նարեկ»-ի մէջ կայ այդ կատարելալ խօսքը, որ հրաշքներ գործած է: Անոր շնորհիւ բուժուած են բազում հիւանդներ, զորս բժիշկները անգոր եղած են բժշկել, եղած է անյոյս հիւանդներու բարձի տակի գիրքը, որ ոտքի հանած ու ապաքինում շնորհած է անոնց: «Նարեկ»ը իր հրաշագործ ազդեցութիւնն ու սուրբ զօրութիւնը մատուցած է նաեւ գերմանացի կնոջ մը, որուն որդին հոգեկան խանգարումներ ունէր: Տղան կը բուժուի, դրական արդիւնքէն ետք, այդ կինը իր տղուն հետ կու գայ Հայաստան եւ զայն կը մկրտէ հայկական եկեղեցոյ մէջ:

Ո՛վ Բարձրեայ, Քու արարածներուդ հոգիներուն մարմիններուն ցաւերը բուժելու համար թող կենաց դէղ ըլլայ Քու անունովդ սկսած ողբերու այս մարտնչը:

Իմ սկսածս Դո՛ն աւարտէ, թող Քու հոգիդ խառնուի անոր մէջ, Քու մեծ զօրութեանդ շո՛ւնչը թող միանայ ինձի շնորհած Քու այս բանահիւստութեան, որովհետեւ Դո՛ն ես որ զօրութիւն կու տաս վիսրած սիրտերուն, եւ ամէնքէն կ'ընդունիս փառք. Ամէն:

Գրիգոր Նարեկացին նաեւ որպէս երաժիշտ նոր շունչ ու կենսք հաղորդած է հայոց միջնադարեան մասնագիտացուած երգարուեստին: Անոր տաղերը անցած են զարգացման անելի քան հազարամեայ ուղի, վերջիններուս, որպէս երաժշտաբանաստեղծական ամբողջական իրողութիւններու վերականգնման համար, ժամանակին, մեծ աշխատանք տարած է Կոմիտասը:

Սուրբ Գրիգոր Նարեկացին ոչ միայն մեր հոգեւոր աշխարհի մեծագոյն ներկայացուցիչներէն է, այլև՝ հայ մտքի, փիլիսոփայութեան, միջնադարեան վաղ վերածնունդի բարձրագոյն կատարելութիւն մը, որուն «Մատեան Ողբերգութիւն» պոէմը առ այսօր՝ արարուելէն անելի քան մէկ հազարամեակ ետք, կը մնայ անզերազանցելի:

Սուրբ Գրիգոր Նարեկացիի մտքով ու գիրերով փոխանցուած հարստութիւնը պարգեւ մը հաղիսացաւ ընդհանրական եկեղեցոյ համար, ուստի 2015 թուականի Ապրիլ 12-ին, Հռոմի Սուրբ Պետրոս տաճարին մէջ, Հայոց Յեղասպանութեան զոհերուն համար մատուցուելիք սուրբ պատարագին, բարձրաստիճան հոգեւոր հայրերու ներկայութեամբ՝ Գրիգոր Նարեկացիին պաշտօնապէս շնորհուեցաւ «Տիեզերական Եկեղեցոյ Վարդապետ» տիտղոսը եւ Փետրուար 27-ը, տօնացոյցին մէջ, ընդգրկուեցաւ որպէս Սուրբ Գրիգոր Նարեկացիի յիշատակութեան օր:

Նայիրի Մկրտիչեան
(Վերջ)

ՄԵՐ ՀԱՅՐԵՐԸ ԿՐ ԽՕՍԻՆ ԱՂՕԹՔԻ ՎԻՃԱԿՆԵՐՆ ՌԻ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԵԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ (ԲԱԺԻՆ Գ.)

«Աղօթքի ժամանակ քրիստոնեաներուն պապահելիքներուն եւ կատարելութեան աստիճաններուն մասին: Արդեօք կարելի է, որ քրիստոնեաներ հասնին կատարելութեան աստիճանին»:

Շնորհքին ներգործութիւնը մարդուն մէջ

Հարցում.- Խնդրեմ, ըսէ՛ մեզի, թէ որո՞նք են այն աստիճանները, որոնց հասած ես ներկայիս:

Պատասխան.- Շնորհքը հետեւեալ ձեւով կը գործէ. կը խաղաղեցնէ սիրտն ու բոլոր անդամները: Նոյնիսկ հոգին, ուրախութեան առատութենէն փոքրիկ մանուկի մը պէս կ'ըլլայ, ամենեփն կը դադրի մարդիկը դատելէ. ոչ հրեան կը դատէ եւ ոչ ալ հեթանոսը, ոչ մեղաւորը եւ ոչ ալ աշխարհիկ կենսք ապրողը: Վասնզի ներքին մարդը բոլորին մաքուր աչքով կը նայի, աշխարհով մէկ կ'ուրախանայ եւ մեծապէս կը ցանկայ, որ բոլորը գիրար սիրեն եւ մէկ անձի պէս զԱստուած պաշտեն: Նոյն մարդը, ուրիշ ատեն թագաւորագնի պէս կ'ըլլայ եւ Քրիստոսի իբրեւ Հայր կը վստահի: Անոր առջեւ յաջորդաբար հարիւրաւոր ու հազարաւոր դոճեր կը բացուին եւ ան կը հարստանայ: Եւ որքան հարստանայ, այնքան անելի զարմանալիքներ կը յայտնուին իրեն. եւ իբրեւ որդի ու ժառանգորդ՝ այնպիսի բաներ կը յանձնուին իրեն, որոնց մասին ոչ մարդկային լեզուն եւ ոչ ալ մարդկային միտքը կարող է արտայայտուիլ կամ խօսիլ: Աստուծոյ փառք. ամէն:

Մեծն Սուրբ Մակար

ՍՈՂՈՄՈՆ ԹԱԳԱԽՈՐԸ

Դավիթը քառասուն տարի թագաւորեց Իսրայէլի վրայ: Երբ մահացաւ, թագաւոր դարձաւ իր որդին՝ Սողոմոնը:

Աստուած գիշեր մը երագի մէջ յայտնուեցաւ Սողոմոնին եւ ըսաւ. - Խնդրէ՛ ինձմէ՛ ինչ որ կ'ուզես, եւ ես պիտի տամ քեզի: - Տէր, դուն մեծ սէր ցուցաբերեցիր ինձ նկատմամբ, որովհետեւ ան ապրեցաւ քեզի հանդէպ ունեցած իր հաւատարմութեամբ, արդարութեամբ եւ անկեղծութեամբ: Եւ հիմա, Տէր, Աստուած իմ, դուն զիս թագաւոր դարձուցիր, սակայն ես շատ երիտասարդ եմ եւ կառավարելու փորձ չունիմ. Տէր, ինձի իմաստութիւն տուր, որուն աջքան կարիքը ունիմ քու ժողովուրդդ կառավարելու, ինչպէս նաեւ չարն ու բարին զատորոշելու,- ըսաւ Սողոմոնը:

